DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
„29„ 08 2005 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 11105362

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

25 հուլիսի 2005 թվականի N 348-Ն

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն "Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջի եւ ՀՀ վարչապետի 2005 թվականի մարտի 5-ի N 139-Ա որոշմամբ հաստատված "Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի" 11-րդ կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել "ժամանակավոր արտահանումից վերադարձված մշակութային արժեքների նույնականացման կարգը"՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգի ապահովման հսկողությունը դնել ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալության պետի վրա:

Հավելված
ՀՀ մշակույթի եւ երիտասարդության
հարցերի նախարարի
2005 թ. հուլիսի 25-ի
N 348-Ն հրամանի

ԿԱՐԳ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է ժամանակավոր արտահանումից վերադարձված մշակութային արժեքների նույնականացման գործընթացը, որը նախատեսված է "Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է միայն պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների եւ պետական սեփականություն չհամարվող այն մշակութային արժեքների վրա, որոնք գրանցված են կամ ենթակա են գրանցման մշակութային արժեքների պահպանական ցուցակում /այսուհետ՝ մշակութային արժեքներ/:

Ժամանակավոր արտահանումից վերադարձված մշակութային արժեքները ենթակա են նույնականացման, որն իրականացվում է մաքսային ծառայության մարմինների կողմից նույնականացման գործընթացի հետ միաժամանակ:

3. Մշակութային արժեքների նույնականացումն իրականացնում է ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալությունը /այսուհետ՝ Գործակալություն/:

4. Նույնականացումն իրականացվում է ժամանակավոր արտահանումից վերադարձված մշակութային արժեքների եւ դրանց՝ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու ժամանակ վավերացված լուսանկարների կամ ցուցակի տվյալների համեմատական ստուգման

DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

միջոցով: Ցուցակի առկայության դեպքում լուսանկարն ընդունելի է նաեւ մշակութային արժեքի անվանման ու ծածկագրի նշումով:

5. Մշակութային արժեքները հայտատուն նույնականացման նպատակով տեղափոխում է Գործակալություն, իսկ դրանց մեծաքանակ կամ ծավալուն լինելու, ինչպես նաեւ վերադարձը ոչ աշխատանքային օրերին համընկնելու դեպքերում՝ իր տարածք:

6. Մշակութային արժեքները հայտատուի տարածք տեղափոխելու դեպքում Գործակալության համապատասխան մասնագետները, համատեղ պայմանավորվածության արդյունքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում այցելում են նշված տարածք եւ իրականացնում մշակութային արժեքների նույնականացման գործընթացը:

7. Մշակութային արժեքները Գործակալություն տեղափոխելու դեպքերում Գործակալության մասնագետները մշակութային արժեքների նույնականացման գործընթացն իրականացնում են Գործակալությունում:

8. Նույնականացման գործընթացն ավարտելուց հետո Գործակալության մասնագետները կազմում են մշակութային արժեքների նույնականացման մասին ակտ:

9. Պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների վնասվածքների դեպքում Գործակալության մասնագետներն ու հայտատուն կազմում են մշակութային արժեքների վնասվածքի մասին ակտ: Մշակութային արժեքների վնասվածքի մասին հայտնվում է համապատասխան լիազորված պետական մարմնին:

10. Մշակութային արժեքների պահպանական ցուցակում գրանցված կամ գրանցման ենթակա պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների վնասվածքների դեպքերում Գործակալության մասնագետներն ու հայտատուն կազմում են մշակութային արժեքների վնասվածքի մասին ակտ:

11. Մշակութային արժեքների անհամապատասխանությունների դեպքերում Գործակալության մասնագետներն ու հայտատուն կազմում են մշակութային արժեքների անհամապատասխանության մասին ակտ: Մշակութային արժեքների անհամապատասխանության մասին հայտնվում է համապատասխան լիազորված պետական մարմնին:

12. Սույն կարգով նախատեսված ակտերը հիմք են հանդիսանում մշակութային արժեքների նույնականացման գործընթացն ավարտելու վերաբերյալ, որոնք կազմվում են երեք օրինակից. մեկը տրվում է Գործակալությանը, երկրորդը՝ հայտատուին, երրորդը՝ մաքսային ծառայության մարմիններին:

UNESCO Cultural Heritage Laws Database (Copyright and Disclaimer apply)